№ 78 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 15 — 1903 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 15 № 78

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վաճառականական համայնքի անելիքը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումը. Պ. Ադամեանի մահվան տասնամեայ յիշատակը Նոր-Նախիջեւանի բեմի վրա. Նամակ Երեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնդկաստանի հայերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Պատկերներ Բաֆֆիի կեանքից.

## ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԵԼԻՔԸ

Թիֆլիսի վաճառական համայնքը վերջին տարիներում սկսել է ցոյց տալ ձգտում դէպի կրթական և արդիւնագործական գործունէութիւնը: Նա այժմ ունի առևտրական դպրոց, որի մէջ ուսանում են 640 աշակերտ: Նրա աջակցութեամբ հաստատված է առևտրի և մանուֆակտուրայի կոմիտէ, որ միջնորդ է հանդիսանում ֆիրմաների միմիսարութեան և վաճառականութեան միջև:

Այդ սկզբնական հիմնարկութիւններին պէտք է հետևեն միւսները, որպէս զի վաճառական համայնքը կարողանայ օգտաւէտ գործ կատարել թէ իր և թէ երկրի ընդհանուր արդիւնագործութեան համար:

Կովկասեան վաճառականը տուաջ նեղ շրջանի մէջ էր շարժվում: Նա զբաղված էր միայն միջնորդի, միայն առնել ծախելու գործերով: Վերջին տասնեակ տարիներում սկսեցին մեր երկրում հաստատվել գործարաններ, ինչպէս, օրինակ, նաւթի, պղնձի, կաշուեգործութեան, բամբակեղէնի, ծխախոտի, մարգանցի, ընդարձակվեց հաղորդակցութիւնը եւրոպական վաճառականների հետ, հիմնվեցին մի շարք բանկային և ընկերակցական հիմնարկութիւններ, մի խօսքով կազմվեց տնտեսական նոր գործօնների մի ամբողջ ցանց, որ սկսեց ազդել վաճառականական կեանքի ընդհանուր բնաւորութեան վրա:

Սակայն վաճառական համայնքը դեռ լուրջ կերպով չէ պարզել իր համար այն փոփոխութիւնները, որոնք կատարվել են երկրի տնտեսութեան մէջ և ձեռք չէ առել միջոցներ ներգործական դեր կատարելու առևտրի և արդիւնագործութեան զարգացման ասպարէզում, որպէս զի կարողանայ պաշտպանել երկրի շահերը:

Մեր վաճառականութիւնը պէտք է աւելացնէ իր կրթական և ներկայացուցչական հիմնարկութիւնների թիւը այնպէս, ինչպէս այդ արել է արևմտեան վաճառականութիւնը: Հերթական են դառնում առևտրական պալատների, արդիւնագործական թանգարանների, արդիւնքների մշտական նմուշահանդէսների, ապրանքների մեծ պահեստների, վաճառականական գործակալութեան, բօրսային կոմիտեի և ուրիշ այդ տեսակ ձեռնարկութիւնների իրագործութիւնը:

Եթէ մինչև այժմ, քանի որ մենք ապրում էինք հին կեանքի պայմաններում, կարելի էր չը շտապել, այժմ, ընդհակառակը, պէտք է արագ շարժվել և գործել, որպէս զի միջազգային մրցութեան մէջ մենք չը ձնշվենք և չը ջնջվենք: Վաճառականութեան համայնքը, ունենալով իր ձեռքին դրամական միջոցներ, պէտք է կարողանայ լայն հայեցակէտ ունենալ երկրի արդիւնաբերութեան վրա և դրական գործունէութեամբ իր կողմից նպաստել ընդարձակելու և զարգացնելու հարստութեան աղբիւրները նրա ազգաբնակութեան համար և ապահովելու նրա դիրքը միջազգային մրցութեան մէջ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Կիրակի, ապրիլի 13-ին, դերասան Արմէնեան, դրամատիկական խմբի դերասանների հետ, տուեց հայերէն մի ներկայացում Վրաց Ազնուականութեան թատրոնում: Խաղացին Էդ. Բրանդէսի «Հիւրը», Եակօվլեվի՝ «Ադամ և Եւա» և Զուդերմանի՝ «Ծրիցիէն» պիեսները:

Բրանդէսի պիեսի մէջ չօշափված է այն հարցը, թէ ներելի է արդեօք կնոջ սխալը ամուսնութիւնից առաջ: Հերոսուհին, Ֆլորիզել, թովիչ հրապոյրի բուռն ազդեցութեան տակ մոռացել է իրան և անձնատուր եղել: Նա չափազանց զղջացել է իր արածի վրա և ատելով ատում է գայթակղողին: Սակայն Ֆլորիզելի անցեալը անյայտ է այն երիտասարդին (Ներգօր) որին նա մարդու է գնում: Երջանիկ և խաղաղ ամուսնական կեանքի երկրորդ տարում բացվում է Ֆլորիզելի գաղտնիքը, երբ գայթակղիչ պարոնը, Ռէպգօլտ, հիւր է գալիս Ներգօրի մօտ, իբրև նրա երիտասարդութեան ընկեր:

Ֆլորիզելի դերը կատարում էր տիկին Դուրեան-Արմէնեան: Դա նոր դերասանական ոյժ է. նա բեմ դուրս եկաւ անցեալ տարի իբրև թատերասէր: Կարճ միջոցում նա շատ մեծ առաջադիմութիւն է արել: Նրա խաղի մէջ կայ գիտակցութիւն, հոգեբանական յոյզերի ըմբռնողութիւն, դերի մարմնացում: Դէմքը, հասակը բեմական են, շարժումները ազատ, առոգանութիւնը բաւարար: Բայց ձայնը թոյլ է, կամ գոնէ դերասանուհին դեռ իշխել չը գիտէ իր ձայնի վրա: Երկրորդ գործողութեան մէջ նրա կատարած աղող խաղը չափազանց վնասվեց թոյլ ձայնի պատճառով. խօսքերը չէին լսվում, ուստի և անկարող էին իրանց վերապահած տպաւորութիւնը գործել: Եթէ տիկինը չարունակէ նոյն լրջութեամբ վերաբերվել իր արհեստին, ինչ նա արել է այս մի տարում, նա կարող է գնահատելի մի ոյժ դառնալ հայ դերասանական ընտանիքի մէջ, որ հարուստ չէ կանանցով:

Ներգօրի դերի մէջ հանդէս եկաւ դերասան Արմէնեան: Նա խաղում է բնական, կենսական և բնորոշ: Անցեալ տարվայ հետ համեմատած՝ նա բարեփոխութիւններ է արել իր դերակատարութեան մէջ. նա թողել է ֆրանսիական այն բառաձգողութիւնները, որոնք խորթ էին մեր հասարակութեան լսողութեան համար: Բեմի վրա նա պահում է իրան ընտանի և չէ դադարում խաղալուց, քանի նա գտնվում է հանդիսականի առաջ: Նրա խաղը մտածված է և մշակված: Մի բարեփոխութիւն, որ կը ցանկայինք տեսնել Արմէնեանի խաղի մէջ, այդ այն է, որ ծանր դերերում, սօլիդ տիպեր ներկայացնելու ժամանակ, նա իր շարժումների մէջ աշխատէր աւելի չափաւոր լինելու, եթէ կարելի է այսպէս ասել, աւելի կլասիքական, աւելի ողբերգական: Արմէնեան, որ միաժամանակ և ռեժիսէօրն է իր խմբի, առանձին ուշադրութիւն է դարձնում բեմի բնորոշ կարգաւորելի վրա: Դա կարևոր գործ է և նպաստում է ներկայացման տպաւորութեանը:

Ռշտունին, Ռէպգօլտի դերում, ցոյց տուեց, որ նա լաւ արտասանել գիտէ, տիրել է իր դերը, բայց նա դեռ չէ խաղում բեմի վրա: Նա լաւ դեկլամատոր է, գիտէ շեշտել և ընդգծել բառերը, բայց կեանքի մարդու տպաւորութիւն չէ գործում: Դերասանը իր ուշադրութիւնը պէտք է դարձնէ այն բանի վրա, որ նրա խաղը և խօսքը դառնան բնական և կենսական.

«Ադամ և Եւա» պիեսում հանդէս եկան տիկ. Գուլազեան և Միրզոյեան և կատարեցին իրանց դերերը աշխոյժով, զուարճութիւն պատճառելով հասարակութեան:

«Ծրիցիէն» պիեսում տիկ. Զմշկեան բնական էր և աղող:

Թատրոնը աւելի բազմամարդ էր, քան առաջին անգամ:

Սիրող

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՏԿԵՐՆԵՐ ԲԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ

(Շարունակութիւն)

Գլուխ XVI

Մեր նորահաստատ ազգային ընթերցարանը նախանձելի դիրք էր բռնել. նա, բացի գրադարան լինելուց, դարձել էր և մի տեսակ հանդիպատեղ: Վաճառական դասից, ուսուցիչներից և ընթերցասէր երիտասարդներից շատերը նրա բացման որոշ երեկոներին ներկայ էին լինում մինչև գիշերվայ ուշ ժամանակ՝ զբաղված լրագիրներ կարդալով և գրախօսութիւններ անելով: Ընթերցարանը ունէր տեսուչ, գանձապահ և քարտուղար, որոնք ընտրվում էին անդամակիցների ձայներով: Քարտուղար էր ընտրված Բաֆֆին, ուր գրեթէ միշտ գալիս էր թէ իր պաշտօնը կատարելու, թէ խօսելու և թէ ընթերցանութեան գրքեր վերցնելու: Ես նկատում էի, որ նա վերցնում էր Ժորժ Զանդի, Էօժէն Սիւի, Ալէքսանդր Դիւմայի և Վ. Հիւգօի հատորներից, որոնք թարգմանված էին պօլսական աշխարհաբառով Պոլսում և Զմիւռնիայում: Դրանց մէջ՝ նա Հիւգօի գրուածներից յետոյ փոքր ի շատէ նշանակութիւն էր տալիս Մոնթէ-Քրիստոյին, իսկ հրապուրված և ծարաւի կերպով կարդում էր Հիւգօի հատորները՝ որպէս յափշտակված սիրահար: Տուրգենևի գործերից էլ նա կարդում էր և շարունակ կասէր, որ դրանք իրանց գեղեցիկ դարձուածներով և պարզութեամբ ռուս գրականութեան զարդն են կազմում:

Ես մի օր ներս մտնելով բանաստեղծի գրասենեակը և նկատելով նրան խորասուզված «Թշուառներ» ընթերցանութեան մէջ, ուզեցի նրան մի փոքր գրգռել, և բացագանչեցի.

—Ինչ էք այդպէս վրա պրծել այդ ֆանֆարօն ֆրանսիացու գրուածքի վրա, դրանք ընթերցողի ուղեղում միայն երևակայական աբսպաւորութիւն են թողնում, աւելի ոչինչ:

Բաֆֆին գլուխը բարձրացնելով և մի ապշած հայեացքով ինձ նայելուց յետո, պատասխանեց.

—Մի այդպիսի կարծիք ես երբէք չէի սպասում ձեզանից. ես այն կարծիքի էի, որ դուք Հիւգօի փառաբանողներից էք... Ո՛չ, անկասկած, դա մի կատակ է. ես ձեզ շատ անգամ նախանձել եմ, ասաց նա, տեսնելով Հիւգօի բնագիր հեղինակութիւնները ձեր գրասեղանի վրա, որոնք ես չեմ կարողանում կարդալ: Ես կարդում եմ միայն հայերէնի թարգմանածները, որոնք բնագրի համն ու հոտը չունեն, և աւելացրեց. «Երանի է քեզ Ֆրանսիա, որ Հիւգօի պէս բանաստեղծ ես ծնել, և ո՞վ կարող է հաւասարվել նրան»:

Վերջին խօսքերը կարծես նա իր սրտի խորքերից հանեց: Պէտք է ասած, որ Բաֆֆին իրաւունք էլ ունէր նախանձելու, որովհետև նա ոչ մի եւրոպական լեզու չը գիտէր, բացի ռուսերէնից, այն էլ ոչ մեծ չափերով: Եթէ նա գիտենար եւրոպական լեզուներ և ունենար բարձր ուսում, գուցէ նա այդ չափերով չէր ենթարկվի ոչ այս, ոչ այն հեղինակի դարձուածներին և ոչ էլ Հիւգօի ազդեցութեան, որ պարզ երևում է համարեա թէ նրա վիպագրութիւններից շատերի մէջ: Հաւատալով որ այդ այդպէս է, հաւատալով, որ նա դաւաճանել է ռոմանտիզմի և գեղարուեստի կանոններին, հաւատալով որ նա նմանողութեան հետևելով զօռով իւրացրել է ատուարաթիւ էֆֆէկտներ և կրկնութիւններ, որոնցով հոգեբանորէն դատողները պէտք է ասեն, թէ դրանք բանաստեղծի հետևողութեան պակասութիւններն են, բայց այսու հանդերձ Բաֆֆին մնում է միշտ հայ վիպագրական աշխարհի առաջընթաց գլխաւորը: Նրա մէջ կայքը այնքան զօրեղ է եղել, որ յաղթելով ստուար դժուարութիւններին՝ նա միայնակ առաջ տարաւ իր բազմաթիւ աշխատութիւնները՝ արիւն քրտինք թափելով:

Ես, չօշափելով նրա պակաս կողմերը, այս էլ ասեմ, որ իտալիական դպրոցից դուրս եկած մի բանաստեղծ է նա, մի բնական ձիրքերով օժտված բանաստեղծ, որին չէ աջողվում բարձր ուսում ստանալ, որին և չէ աջողվում հայերէն լեզուով նպատակայարմար վիպական գրքեր գտնել, որոնցով կարողանար իր բեղմնաւոր ուղեղը զօրեղացնել: Դիմել, օտար լեզուներով կլասիքական, քնարերգական, ռոմանտիքական և այլն հեղինակութիւնների, չէր կարող: Ուրեմն նրան մնում էր միայն մի ելք: Դա այն ելքն է, որին էլ դիմել է նա: Նրա թերութիւնն էլ կայանում է նրա մէջ, որ շատ է ենթարկվել նմանողութեան, և այդ է նրա հոգեբանական թոյլ կողմը: Ուրիշ կերպով էլ Բաֆֆին Բաֆֆի չէր կարող լինել, շատ շատ նա մեզ համար մի աչուղ պիտի դառնար, նկարագրելով զանազան լեգենդաներ, հին զրոյցներ

## Գ. ԱԴԱՄԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԱՄԵԱՅ ՅԻՇԱՏԱԿԸ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԲԵՄԻ ՎՐԱ

Մարտի 23-ին դրամատիկական ընկերութիւնը տօնում էր քաղաքային թատրոնում հանգուցեալ Պետրոս Ադամեանի մահվան տասնամեայ յիշատակը: Այդ օրը Պետրոս Ադամեանի յիշատակին նուիրած ներկայացում և ցուցահանդէս պիտի լինէր: Ադամեան, այդ նուիրական և հնչուն անունը, կախարդական երաժշտների և ցնորքների յիշողութիւններ է զարթեցնում նախիջևանցու մտքում: Ադամեանի անունը սերտ կապված է Նախիջևանի հայ բեմի անցեալի հետ:

Դեռ նախիջևանցու յիշողութեան մէջ վառ են մնացել ութսունական թուականների դրամատիկական ընկերութեան սկզբնաւորութեան տարիները—Նոր-Նախիջևանի հայ բեմի փառաւոր և նախանձելի շրջանը:

Այդ թուականներին հանգուցեալ մեր արտիստը բեմական դեղեցիկ ոյժերից կազմված թատերասէրների խմբով հրաշքներ էր գործում Նախիջևանի և Բաստոմի բեմերի վրա, ապշեցնելով թէ հայ և թէ օտար—ռուս հասարակութիւնները իր արտակարգ խոշոր գեղարուեստական տաղանդով:

Նախիջևանցին դեռ չէ մոռացել այդ գեղեցիկ անցեալը: Եւ նախիջևանցին ցոյց տուեց Ադամեանի յիշատակին նուիրած գիշերը, որ նա գիտէ յարգել և սիրել իր մայրենի գեղարուեստին նուիրված ամենամեծ զաւակներից մէկի յիշատակը:

Այդ օրվայ համար դրամատիկական ընկերութեան կողմից չէր խնայված ոչինչ, ոչ մի լարոյական և նիւթական աշխատանք և զոհաբերութիւն, որքան հնարաւոր է փառաւոր և ընտիր անել այդ ներկայացումը. բաւական է յիշել, որ ընկերութիւնը, ունենալով ձրի թատրոն և լուսաւորութիւն, ծախս էր արել այդ ներկայացման համար մօտ 300 ռուբլի: Հասարակութիւնը՝ սկսած հարուստ, ինտելիգենտ, միջին և ստորին դասակարգից՝ եկել լցվել էր թատրոնը գոնէ մի քանի ժամ ապրելու Ադամեանի յիշողութիւններով:

Տեղական ռուս լրագիրներում մի օր առաջ յայտարարված էր, որ մայիսի 23-ին, կիրակի օր, ս. Լուսաւորիչ եկեղեցում, դրամատիկական ընկերութիւնը հոգեհանգիստ է կատարելու, ուր հրաւիրում էր հանգուցեալի յիշատակը յարգողներին:

Հրաւիրված էր հոգեհանգստին ս. Լուսաւորիչ եկեղեցու ամբողջ միաբանութիւնը. նոյն իսկ այդ դէպքումն էլ դրամատիկական ընկերութիւնը ցանկացել էր առատաձեռն լինել և հանդիսաւոր անել «մայրենի եկեղեցու սրտից անջատված զաւակի յիշատակը... Մենք ապա-

սում էինք, որ մեր հոգևորականութիւնը առարկութիւններ առաջ կը բերէ և կը հրաժարվի կաթոլիկ հաւատացեալի յիշատակին հոգեհանգիստ կատարելու, բայց մեծ եղաւ մեր զարմանքը, երբ ոչ մի առարկութիւն և խոչնդոտ չը յարուցվեց, մանաւանդ աւելի մեծ էր մեր զարմանքը, երբ եկեղեցու բեմից տեղական քահանաներից աւագագոյնը՝ հայր Զարիփեան՝ գեղեցիկ դամբանական խօսեց եկեղեցում։

Նա շեշտեց, որ եկեղեցին այսօր հոգեհանգիստ կատարելով Պետրոս Ադամեանի հոգու համար, հաստատակութիւնը կարող է երկու առարկութիւն անել. նախ՝ որ Ադամեանը դերասան էր և երկրորդ՝ որ նա «պապական էր»։

Առաջին դէպքում՝ արժանապատիւ հայրը շեշտեց, որ եկեղեցին իսկական գեղարուեստին, ապա ուրեմն և թատրոնին երբէք հակառակ և ընդդէմ չէ եղել. թատրոնը, շարունակեց հայր Զարիփեան, դպրոց է և բարոյականութեան ու դաստիարակութեան գեղեցիկ օրինակ, երբ նա միայն իր կոչմանն է ծառայում և հեռու է մարդկանց վատ և անամօթական կրքերը շարժելու ձգտումներից։ Ադամեան, իբրև դերասան, իր ամբողջ կեանքում խաղացել է հանճարեղ հեղինակների բարձր գեղարուեստական երկերը՝ բարոյականութեան և դաստիարականութեան ուսուցիչ լինելով հայ ժողովրդի համար։

Երեկոյեան թատրոնում են յարգում Պետրոս Ադամեանի յիշատակը... Որքան մխիթարական և գեղեցիկ օրինակ. եկեղեցին և թատրոնը միանալով՝ մի գեղեցիկ օրինակ են ցոյց տալիս, որ թատրոնը-գեղարուեստը նոյնքան մաքուր և բարձր հաստատութիւն է, որքան և եկեղեցին...

Ներկայացումից առաջ ապօթէօղ պիտի լինէր։

Բացվում է մեծ վարագոյրը։ Բեմը բռնած են դրամատիկական ընկերութեան հանդիսաւոր հագնված անդամները։

Առաջ է գալիս դրամատիկական ընկերութեան նախագահ Գէորգ Զուբարը, որը կարդում է մի ընդարձակ ճառ, որի մէջ հաղորդում է Ադամեանի կենսագրութիւնը և նրա կատարած դերը։

Ճառը թողեց խորը տպաւորութիւն, բայց աւելի մեծ եղաւ տպաւորութիւնը, երբ կամաց-կամաց բացվեց փոքր վարագոյրը և յետեւից երևաց Ադամեանի կիսարձանը բենգալեան և էլէքտրական լուսաւորութեան մէջ։ Կիսարձանը դրված էր բարձր պատուանդանի վրա, շուրջը զարդարած տրօպիքական բոյսերով և ծաղիկներով։ Կիսարձանի եռանը կանգնած էր մի օրիորդ, յունական տունիկա հագած և ձեռքին մի մեծ դափնեայ պսակ, ներկայացնելով իրանով դրաման. իսկ կիսարձանի առաջը մի ուրիշ օրիորդ, նոյնպէս սպիտակ յունական տունիկա հագած, Մուսան էր ներկայացնում, որը և կարդաց ջութակների մելամաղձոտ նուագածութեան տակ Ադամեանին նուիրված Ռ. Անտիեանի գրած ոտանաւորը։ Ապօթէօզը վերին աստիճանի ցնցող և խորը տպաւորութիւն է գործում հասարակութեան վրա. հասարակութիւնը ուղղակի արտասվում էր հանճարեղ արտիստի միայն ուրուականը տեսնելով բեմի վրա, որ նրանցից շատերը երբեմն լսել և տեսել են Ադամեան—Համլէտին, Քինին, Կոռաղօին...

Ապօթէօզից յետոյ սկսվեց ներկայացումը. խաղացին «Սէր և նախապաշարմունք», որը բաւական թոյլ անցաւ, թէև առանձին անհեթութիւններ աչքի չընկան։ Սիւլիվանի դերը, որը մի ժամանակ խաղացել է հանգուցեալ Ադամեանը, խաղում էր Ադամեանի ընկեր և մօտիկ բարեկամ պ. Կարապետ Թիթրեանը։

Անտրակտներում հասարակութիւնը ֆոյէյում նայում էր Ադամեանի յիշատակին ի ցոյց դրված նրա իրերը, աֆիշները, լուսանկարները, նկարները, նամակները և այլն։

Մի և նոյն ժամանակ օրիորդները ծախում էին բաց նամակներ Ադամեանը իր դերերում, պատկերներ և յատկապէս այդ օրվայ համար գրված ռուս լեզուով բրոշիւրները Ադամեանի կենսագրութիւնով։

Ի ցոյց դրված Ադամեանի մի ժամանակ ստացած իրերի մէջ, որոնք այժմ բանկումն են գտնվում, աչքի էին ընկնում՝ Ատրախանի հայ ձկնորսների նուէրը՝ մի մեծ արծաթէ ոսկեջրած վազա ձկնորսական էմբլէմայով, Խարկովի ռուս հասարակութեան նուէրը ֆրանսերէն տառերով յիշատակ գրած, հարուստ սերվիզ, Մոսկվայի հայ հասարակութեան կողմից մի գեղեցիկ արծաթէ ոսկեջրած էմալով և քարերով զարդարած պօրտ-սիգար, մի պօրտ-սիգար Թիֆլիսի ռուսաց խմբից 41 ստորագրութիւններով, մի հատ և թանկագին ոսկեայ շղթայ, երկու զոյգ ոսկեայ և թանկագին քարերով զարդարած զապոնկաներ, երկու մեծ արծաթեայ և ոսկեջրած վազաներ և այլն։ Բոլոր անտրակտներում հասարակութիւնը խնված ֆոյէում ուշի ուշով և հեռադիտակով նայում էր ի ցոյց դրված իրերը։

Սիրողները բացատրութիւն էին տալիս հասարակութեան։ Կէս գիշերից բաւական անցել էր, երբ հասարակութիւնը սկսեց ցրվել թատրոնից, տանելով իր հետ մխիթարական և մի և նոյն ժամանակ գերեզման իջած անցեալի տխուր յիշողութիւններ.... Գեղեցիկ օրեր, երազ օրեր...

Ց. Դենչեան

## ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 11-ին

Արտաքին փայլի, պչրանքի եռասէր այս դարում մարդ շատ քիչ անգամ է առիթ ունենում միխիթարութիւն զգալու՝ տեսնելով ժողովրդի մի մոռացված դասակարգ, ասնջված, հոլածված մի բազմութիւն այնտեղ, որի դրոները փակված են լինում հասարակ մահկանացուի առաջ։ Ահա այդ դռները մի րոպէով այսօր, ամսթա 11-ին, բացվել էին Երևանի ոչ ընտրեալ դասակարգի առաջ.—քաղաքային ժողովարանի դահլիճում տրվում էր ժողովրդական ներկայացում։

Վաղուց այդ պատերը չէին տեսել մի այդպիսի հասարակութիւն, վաղուց այդ դահլիճը ներս չէր ընդունել չստի ու մաշիկի, չուխի ու արխալուխի հասարակութիւն, քրտնախաշ դէմքեր, բանուկ ու կոպիտ ձեռքեր։ Հազիւ հարուստ բուրժուազիան մի քանի րոպէով իր աթոռը զիջել էր մուրճի տակ աշխատողին։ Այս էլ մի միխիթարութիւն էր, ժամանակի մի փոքրիկ յաղթութիւն։

Ամսթա 8-ին և 10-ին նոյն բեմի վրա փայլում էր տիկին Սիրանոյշ իր խմբով։ Խաղում էին Դիւմայի «Կամելիաազարդ տիկին» և Սարդուի «Տօսկան». տեղերի գները անմատչելի շատերի համար, ոչ պակաս 1 ռուբլուց դահլիճում, հայրերն են եղած, որ փոխանակ նոր աշխարհաբառը այդ ախտերից մաքրելու, աւելի և աւելի տարածել են։ Երբ ես նկատում էի, որ Բաֆֆին լաւ տրամադրութեան մէջ է, առիթներ կը տայի, որ նա մի քիչ խօսէ։ Գիշեր է և մենք ազգային ընթերցարանումն ենք։ Ես երկար թերթում էի Պոլսից ստացված լրագիրները. յանկարծ Բաֆֆին այդ նկատելով հարցրեց.

—Այդ ինչ էք կարդում։

—Պոլսից նոր ստացված թերթերը։

—Ի՞նչ էք գտնում դրանց մէջ կրթական։

—Ես մի քիչ սիրում եմ պօլսական ոճը։

—Ինչո՞ւ էք սիրում։

—Որովհետև նա աւելի կոկված է քան թէ մերը։

—Ինչպէս էք գտնում նրա ուղղագրութիւնը։

—Է՞հ, դա էլ մի մօդայի պէս բան է, էլի։

—Իսկ ինչ կասէք նրանց լրագրական ուղղութեանը։

—Նրանց ուղղութիւնն էլ մի տեսակ ուղղութիւն է։

—Ո՛չ, ասաց Բաֆֆին, դուք գործին թէ քննական աչքով չէք նայում և թէ ձեր էսթեթիկան լաւ զարգացած չէ։

Բաֆֆին երբեմն ինձ հետ մենտօրի պէս էր վարվում, որովհետև նա ինձանից 6 տարով էլ մեծ էր։

—Պօլսական—տիրացուական ուղղութիւնը, վրա բերեց նա, որը դուք սիրում էք, չունի իր հրահանգիչ կողմերը։ Պոլսի լրագրութիւնը՝ երկար տարիներ ախ ու վախ քաշելով, ափսոս, ուժգ Հայաստան կանչելով և զանազան հառաչանքներ արձակելով՝ բթամիտ է դարձրել տեղական ժողովրդին, խարխափեցնելով նրան այդ տափակ ուղղութեամբ և մեռելային հեծեծանքներով։ Ցաւալի է, ասաց նա, որ նրանց խմբագիրները նոր սերունդին չեն տալիս սթափեցուցիչ գրական պաչար։ Ժամանակն է, որ նրանք իրանց լրագրական ուղղութեան փոփոխութիւն տային՝ մօտեցնելով նրան ժողովրդի սրտին, կրթելով նրանց թըմբրած և ապշած միտքը։ Ժամանակ է, որ նրանք թօթափելով տղայական խանձարուրքը, փոխանակ իրանց էֆէնդի—բէյերի ունեցած ապրուստը, բնակարանը և կեանքի զանազան երևոյթները նկարագրելու՝ ժողովրդին տային այնպիսի կենդանի նկարագիրներ, այնպիսի զարթեցնող վէպեր, որոնցից նա կարողանար մտաւոր ուժ և պաչար հաւաքել։ Ժամանակիս ընտիր պճնազարդ հասարակութիւն, բայց ինչ համեմատութիւն այդ երկուսի և այսօրվայ ժողովրդական ներկայացման մէջ։

Խմբվել էին մի բուռն բարի ցանկութիւններ—օրիորդներ և երիտասարդներ—նպատակ դնելով մտաւոր կրթութիւնից և զուարճութիւններից զուրկ արհեստաւոր և չքաւոր դասի համար տալ մի ժողովրդական ներկայացում։ Պիէսան ընտրելիս շատ էլ չէին մտածել. վերցրել էին Է. Տէր-Գրիգորեանի «Զրկանքի Զոհը» և «Մօդան», չարչարվել շաբաթներ, ընկել այս ու այն կողմ, մինչև որ աջողվել էր ներկայացումը գլուխ բերել։ Որքան էլ չնորհիւ մեծ մասամբ առաջին անգամ բեմ դուրս եկողների խաղը թոյլ անցնէր, բայց այն հանգամանքը, որ ի նկատի ունենալով չքաւոր և արհեստաւոր դասակարգը տեղերի գները նշանակված էին անչափ մատչելի, այն է 12 կոպ., 22, 32, 42, 55 և վերջապէս 65 կոպէկ ամենաառաջին կարգը,—դահլիճը ոչ միայն լիքն էր, այլ և շատերը վերադառնում էին տեղ չը լինելու պատճառով։ 300-ից աւելի հանդիսականներից երեք քառորդը անչուշտ պատկանում էին այնպիսի դասին, որ ոչ մի հնարաւորութիւն չունի սովորական ներկայացումներին յաճախելու։ Եւ ահա այդ զուրկ ու մոռացված դասակարգը, չնորհիւ մի խումբ օրիորդների և երիտասարդների եռանդուն ջանքերի, միջոց ունեցաւ մի բոպէ զուարճանալու, առօրեայ մաշող ու տանջող հոգսերից յետոյ այդ բոլորը մոռացութեան տալ մի վայրկեան և ապրել մտաւոր ու կրթիչ տեղում։ Նա հեռացաւ գոհ սրտով, կարծես երախտագիտութեան մի յոյզ դէմքին գրոշմված, նա հեռանում էր կարծես չնորհակալութիւն յայտնելով ներկայացումը կազմողներին։

Խաղի մասին մենք իրաւունք էլ չենք համարում խստապահանջ լինել. որքան էլ խաղացողները թոյլ տանէին ներկայացումը, մենք չնորհակալ պիտի լինէինք, բայց կասենք, որ մի քանի չնորքով խաղացողների. հետ կային և թոյլերը։ Միայն չենք կարող չը նկատել, որ պիեսի ընտրութիւնը այնքան էլ աջող չէր։

Ուստի գովելի այդ ձեռնարկութիւնը համակրութեան արժանացնելով հանդերձ՝ ցանկալի էր, որ այդ ներկայացումը վերջինը չը լիներ, այլ սկիզբը մի շարք այսպիսի ներկայացումների, որոնց կատարելիք գործը շատ մեծ է։ Միայն չը պէտք է մոռանալ, որ ժողովրդին պիտի տալ լաւ և դիւրամարս մտաւոր կերակուր։

Ա—Դ.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, ապրիլի 4-ին

«Մշակի» № 64 կարդացի Ծխականի մի թղթակցութիւն—«Հասարակական բարքերից» Մոսկվայի Գասպարեան Անկելանոցի երկու անդամի հրաժարականի առիթով, ուր ի միջի այլոց ասված է. «Իսկ տարիներ առաջ ընտրված էր բանաստեղծ Ս. Շահազիզեան, որի օրով Անկելանոցը կենդանութեան նշաններ ցոյց տուաւ, բայց դա երկար չը տևեց. բանաստեղծը, տարաբախտաբար, համբերութիւն չունեցաւ անսահմանջ մաքառելու ճահճային անշարժութեան դէմ և զայրացած՝ թողեց, հեռացաւ «պատուելիներից» դասից»։—Արդարութիւնը պահանջում է ասել, որ ես իմ չորս հինգ տարվայ ծառայութեան միջոցին ընդհարումներ չեմ ունեցել «պատուելիների հետ» և ուրիշ պատճառով եմ հեռացել Անկելանոցից։

Ս. Շահազիզեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի, ապրիլի 13-ին, Թիֆլիսի ժողովրանում կայացաւ Թիֆլիսի վաճառականների աւագ Եգոր Աւագիչ Դաւիդովի պաչտօնավարութեան քսանհինգամեայ յօբելեանի կատարումը։ Հանդէսին ներկայ էին ազնուականութեան պարագլուխ իշխան Դ. Մելիքով, քաղաքագլխի պաչտօնակատար Մ. Շեստակով, պետական բանկի, հողային կրեդիտային ընկերութեան, Ազովակի բանկի կառավարիչներ՝ Նիկիտին, Ղամբարեան, Նիկոնով, Ուդելի ներկայացուցիչ Գօգոլ-Եանովսկիյ, մամուլի և հոգևորականութեան ներկայացուցիչներ, առևտրի և մանուֆակտուրայի կոմիտէի նախագահ Ադելխանով, առևտրական դպրոցների վերատեսուչ Ֆիշեր և ուրիշներ։ Հանդէսը սկսվեց մի փոքրիկ զեկուցագրի ընթերցանութեամբ, որի մէջ յայտնված էր, թէ յօբելեար Դաւիդովի օրով բացվել է առևտրական դպրոց Թիֆլիսում, հաստատվել է առևտրի ու մանուֆակտուրայի կոմիտէ Թիֆլիսում և հասցրված է վաճառականական համայնքի դրամագլուխը մինչև 230,000 ռուբլի։ Յօբելեարին չնորհաւորական ուղերձ մատուցեց Թիֆլիսի վաճառականութիւնը, նոյնպէս առևտրական դպրոցի վարչութիւնը։ Ստացվել էին չնորհաւորական հեռագիրներ Պետերբուրգից (մինիստրութեան պաչտօնեայ Անօպովից), Օդեսայից, Բագուից, Ալէքսանդրոպոլից և ուրիշ տեղերից։ Այնուհետև հանդիսականները հրաւիրվեցին սեղանի, որտեղ առաջարկվեցին կենացներ Թագաւոր Կայսրի, Կայսրուհու, Թագաժառանգի, նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի, կառավարչապետի, յօբելեարի, ազնուականութեան պարագլխի, մամուլի, և զանազան անձանց։

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ հինգշաբթի օր, ապրիլի 17-ին, Կարա-Մուրզայի երդեցիկ խումբը կը տայ Բագուում մի կոնցերտ, որին կը մասնակցեն երկու սեռի սիրողներ։ Խումբը կերգէ Պօղոս Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ։

—

Կիրակի, ապրիլի 13-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան ընդհանուր ժողովը, որի ժամանակ որոշվեց. 1) Հաստատել ընկերութեան 1902 թուի հաշիւը, որից երևում է, որ ընկերութիւնը ունեցել է մուտք այդ տարին 4648 ռ. 69 կ., ծախս՝ 1210 ռ. 20 կ., մնում է պատրաստի դրամ 3438 ռ. 49 կ.։ 2) Ցանձնել վարչութեան դիմելու և իրաւունք ձեռք բերել առևտրական դպրոց բանալու ընկերութեան անդամների համար։ Ապա կատարվեցին պաչտօնատար անձերի ընտրութիւններ։ Վարչութեան անդամ ընտրվեցին՝ ա) Մարկունով Դ. Ա., բ) Գրժէբին Ա. Ի., գ) Ղիպիանի, դ) Աբրահամեան Ն. Ռ.։ Փոխանդամներ՝ ա) Շերբինեան Կ. Մ. բ) Ցիսին Ն. Ե. գ) Ցակոբջանեան Ղ. Ա., դ) Դալաստան Ս. Ա.։ Վերատեսուչ յանձնաժողովի անդամներ՝ ա) Բողուխեան Դ. Ե., բ) Տէր-Ցարութիւնեան Մ. Դ. գ) Աւագեան Վ. Ա., դ) Մելքոնեան Վ. Ա.։ Ընկերութիւնը ունի 123 իսկական անդամ, 1 պատուաւոր, 1 իսկական ցկեանս և 26 օժանդակող անդամներ։ Ժողովին ներկայ էին 55 անդամ։

—

Մեզ հաղորդում են հետևեալը. «Հաւլաբարի

---

և աւանդավէպեր «Աալի Քարամի» նման։ Կամ պիտի երգէր մի այսպիսի բան։

Ով էր տեսել էս աշխարհս էս օրին,
Մեր մեղացը չարժը քանդեց Ագռոին։

Եւ ինչպէս կարելի է համեմատել այդ երգուածը «Զայն տուր ով ծովակի» հետ։ Այլ պայմանների մէջ են ծնվել կրթված աշխարհի բանաստեղծները։

Բանաստեղծը շարունակ իր գրասեղանի վրա պահում էր պօլսական աշխարհաբառով թարգմանած վէպերից, ըստ մեծի մասին Հիւգօից, բայց նա ատելով ատում էր արևմտեան աշխարհաբառի գրելու ձևը, ոճը և թափթփած տառադարձութիւնը։ «Պօլսական բարբառը, ասում էր Բաֆֆին, բառերով է միայն հարուստ, իսկ նրա երկարաձիգ նախադասութիւնները և տարօրինակ հնչմունքները անտանելի են. օրինակ փան մը ըսել (մի բան ասել), քորց մը ընել (մի գործ անել), փաւազան քէշ կըլլայ (բաւական դէշ կը լինի), թասրս սովորել եմ (դասը սովորել եմ) և այն խիստ անսովոր են հայ ականջների համար, և կարծես դրանք թմրած մաքերի հնչմունքներ լինեն։ Այդ խոտորմունքների պատճառը, ասում էր նա, աւելի Մխիթարեան գիտնական հայրերն են եղած, որ փոխանակ նոր աշխարհաբառը այդ ախտերից մաքրելու, աւելի և աւելի տարածել են։ Երբ ես նկատում էի, որ Բաֆֆին լաւ տրամադրութեան մէջ է, առիթներ կը տայի, որ նա մի քիչ խօսէ։ Գիշեր է և մենք ազգային ընթերցարանումն ենք։ Ես երկար թերթում էի Պոլսից ստացված լրագիրները. յանկարծ Բաֆֆին այդ նկատելով հարցրեց.

—Այդ ինչ էք կարդում։

—Պոլսից նոր ստացված թերթերը։

—Ի՞նչ էք գտնում դրանց մէջ կրթական։

—Ես մի քիչ սիրում եմ պօլսական ոճը։

—Ինչո՞ւ էք սիրում։

—Որովհետև նա աւելի կոկված է քան թէ մերը։

—Ինչպէս էք գտնում նրա ուղղագրութիւնը։

—Է՞հ, դա էլ մի մօդայի պէս բան է, էլի։

—Իսկ ինչ կասէք նրանց լրագրական ուղղութեանը։

—Նրանց ուղղութիւնն էլ մի տեսակ ուղղութիւն է։

—Ո՛չ, ասաց Բաֆֆին, դուք գործին թէ քննական աչքով չէք նայում և թէ ձեր էսթեթիկան լաւ զարգացած չէ։

պահանջն ուրիշ է. դուք անչուշտ յիշում էք մեր Միրան աղային, մնացածը հասկանալի է։

Ես կարծում եմ, որ ընթերցողը ինձ հետ կը համաձայնի ենթադրելու, որ Բաֆֆին իր պարզ ու վսեմ գաղափարներով և իր զօրեղ գրչով միշտ մնացել է ժողովրդի սրտին մօտիկ, ժողովրդի մոռացված խաւերը նկարագրող վիպասան առանց սենթեմենտալիզմ։ Կարդալով նրա բազմաթիւ նամակները, յօդուածները և հեղինակութիւնները, ես գտնէ չեմ յիշում նրա մեծաքանակ գրուածքներում մի այնպիսի վայրկեան, որպիսին յիշատակվեց վերևում։ Մի անգամ ես հանդիպել եմ նրա գրուածքներից մէկում «(Հիւսիսափայլի» մէջ), որտեղ Բաֆֆին խօսելով հայրենասիրական բուռն զգացմունքներով, բերում է մի այսպիսի հառաչանք, այն էլ մի սրբազան հեղինակի հոգեբուխ երգերից

«Հուրն սիրոյ իմոյ ազգի, միշտ ի խարոյկ
սրտիս վառի։
«Զուրքք արտասուաց ոչ շիջանի, օգնեա Ցիսուս Փրկիչ բարի»։

(Կը շարունակվի)

հայ թատերաբերների խումբը, կիրակի, ապրիլի 13-ին, տուեց իր 16-րդ հանրամատչելի ներկայացումը։ Ներկայացնելու համար այս անգամ ընտրված էին երկու վոդեվիլներ. կարնաս կոնցերտային բաժին, ուր երգում էր սիրողների երկսեռ խումբը, ղեկավարութեամբ պ. Պապեանի։ Կոնցերտական բաժինը, որ հետաքրքրութիւն էր պատճառել այցելուներին, գրաւել էր թատրոն կանանց մեծ բազմութիւն։ Բայց, դժբաղդաբար, այդ բաժինը ապրող չանցաւ, չնորհիւ այն հանգամանքի, որ երգեցիկ խումբը երգում էր տիրացուական եղանակներ։ Պ. Պապեանը դուրս էր բերել բեմը մեծ մասամբ եկեղեցում երգողներին, առանց կրկնութիւններին վարժեցնելու։ Պ. Պապեանից, իբրև եկեղեցական խմբում երգողից, շատ բան պահանջել չէ կարելի, բայց յանդգնութիւն է հրապարակով «կոնցերտ» յայտարարել և դէսից-դէնից հաւաքած երգիչներին բեմ դուրս բերել։ Ներկայացրած վոդեվիլներն ևս շատ թոյլ անցան, չնորհիւ դերակատարների անփութութեան։ Պէտք է հաւատարցինների համար խաղալ աւելի մատչելի պիեսներ, քան այն վոդեվիլները, որոնք ներկայացվեցին ապրիլի 13-ին։

—

Երկրաչարժաչափական մասնաժողովը, որ հիմնված է գիտութիւնների կայսերական ակադեմիայի ֆիզիքո-մաթեմատիքական բաժանմունքում, ժողովել է մանրամասն տեղեկութիւններ անցած տարի Շամախում պատահած երկրաչարժի մասին։ Մասնաժողովի խնդրանքով ժամանակին Շամախի ուղարկվեցին երկրաբան Վէբէր և մասնաժողովի անդամ պրոֆէսոր Լեվիցկիյ, որոնց ճանապարհորդութեան և հետազօտութիւնների ծախքերը վճարեց երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը։ Երկու գիտնականներն էլ ներկայացրին մասնաժողովին իրանց զեկուցումները կատարված հետազօտութիւնների մասին։ Ապա պրոֆէսոր Բոգդանովիչ, որ ուղարկված էր Կովկաս երկրաբանական հետազօտութիւններ կատարելու, հաղորդեց մասնաժողովին իր դիտողութիւնները սէյսմիքական երևոյթների մասին Շամախու երկրաչարժի շրջանում և ուշադրութիւն դարձրեց այն կապի վրա, որ կայ այդ երևոյթների և Շամախու երկրաբանական կազմութեան մէջ։ Այդ բոլոր տեղեկութիւնները Շամախու երկրաչարժի մասին կը հրատարակվեն մասնաժողովի «Սէյսմիքական բիւլլետէնում»։

—

Կովկասեան թէյի մշակութեան գործը Բաթումի շրջականներում տարէցտարի զգալի կերպով առաջադիմում է։ Անցած 1902 թուականին, Զակվայում, արքունի կալուածների տնկարանում, թէյի հունձը հաւաքված է 55 դեսեատինից։ Առաջին հունձը տեղի ունեցաւ ապրիլ և մայիս ամիսներում. ստացվեց 76,325 ֆունտ թաց տերև. երկրորդ հունձը յունիս ամսում տուեց 62,430 ֆունտ տերև, երրորդը սեպտեմբերին տուեց 37,412 ֆունտ, թէև չորրորդ հունձ էլ տեղի ունեցաւ հոկտեմբերին, բայց նրանից շատ քիչ արդիւնք ստացվեց։ Ընդամենը ժողովվեց 116,165 ֆունտ թաց տերև, որից ստացվեց 1000 պուդից աւելի չոր թէյ։ Մասնաւոր կալուածատէրերը նոյն թուականին ժողովեցին 6,829 ֆունտ թաց տերև և յանձնեցին մշակելու Զակվայի արքունի կալուածների գործարանին, որ իւրաքանչիւր ֆունտ թէյի մշակութեան համար վերցնում է մասնաւոր անձերից 20 կոպէկ։ 4½ ֆունտ թաց տերևից ստացվում է մի ֆունտ չոր մշակված թէյ։ Այսպիսով անցեալ տարվայ թէյի հունձից վաճառանոց է ուղարկված աւելի քան 1,100 ֆունտ կովկասեան թէյ։

—

«Новое Обозрѣніе» լրագրում կարդում ենք. «Թիֆլիսի խոշոր դրամատէրերից մէկը, ինչպէս լսում ենք, յայտնել է Թիֆլիսի դումայի մի քանի ձայնաւորներին, որ ինքը ցանկութիւն ունի 100,000 բուբլի նուիրելու քաղաքային ապագայ հիւանդանոցի համար բնակարան չինելու։ Այս առիթով մտադրութիւն կայ դումայում հարց բարձրացնել քաղաքային հիւանդանոց հիմնելու՝ ներքին և խիրուրգիական հիւանդութիւններ ունեցողների համար մօտաւորապէս 100 մահճակալով և համապատասխան բնակարան չինելու նպատակով քաղաքային հողի վրա»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ուսումնական տարին վերջանում է, և ահա թեմական դպրոցի տեսուչ վարդապետը զատական տօները լաւ միջոց համարեց հաշտվելու թեմական առաջնորդի հետ, որի դէմ ամբողջ տարի լարված էր։ Զատկի օրը ուսուցչական խմբի հետ մասաւ առաջնորդի աջը առնելու, չը նայած որ երկու օր առաջ մի շուշեցի աշխատեց հաշտեցնելու և առաջնորդը մերժեց ուրիշի տանը հաշտվել իր ստորադրեալի հետ։ Կարող էք երևակայել, որ վարդապետը մտնէ եկեղեցի և պատարագին շուրջառ չը ծածկէ, կամ Զատիկ օրը պատարագին, երբ պատարագիչը թեմական առաջնորդն էր, եկեղեցում երգեցիկ խումբը չը լինի»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՑԵՐԸ

—

Կալկաթայից գրում են «Սուրհանդակին».

Հազիւ երկու ամիս կընէ որ հոս եկած եմ և կուզեմ երբեմն թղթակցութիւններ ղրկել ձեր թերթին։

Դեռ Հնդկաստանը չը տեսած, իմացած էի թէ մեծահարուստ հայ վաճառականներ կան հոս։ Ասոր համար երբ Կալկաթա հասայ, առաջին գործս եղաւ հարցնել փնտռել տեղացի հայերուն կեդրոնը։

Բաւական ատեն թափառելէ վերջը, հազիւ յաջողեցայ տեղացի վաճառականի մը չնորհիւ գտնել մէկ երկու հայերու հասցէն։ Կրնաք երևակայել թէ որչափ ուրախութիւն զգացի, երբ վերջապէս յաջողեցայ ազգակից մը գտնել։

Բայց յուսախաբութիւնը շուտով վրայ հասաւ։ Ինծի ճանչցուցածներն անունով միայն հայ էր. դէմքը, շարժումները, հագուածքը և մանաւանդ խօսուածքը երբէք հայու յատկանիշ մը չունէին։ Մէկ երկու հարցումներ ըրի, Գոլսեցիի լեզուովս, բայց հազիւ կրցաւ կէս անգլիերէն, կէս գրաբար լեզուով պատասխաններ մը տալ։

Զը կրցայ բան մը հասկնալ իր տուած բացատրութիւններէն։ Միայն սաչափը հետեցուցի թէ, հոս գտնուող հայերը շատ հեռու չեն բոլորովին ձուլուելէ, եթէ չեն ձուլուած դեռ։

Այս պայմաններուն տակ ինչ կուզէք որ գրեմ ձեզի։ Ազգակիցներ փնտռելէ ձանձրացայ, որովհետև քանի տեսնէի զանոնք, սիրտս անչափ կը ճմլուէր։

Իմացածիս նայելով, Կալկաթայի մէջ հայերը ս. Նազարէթ անուն եկեղեցի մը ունին։ Թերևս ուրիշ ատեն առիթ ունենամ անոր հովիւին հետ տեսակցելու և ձեզի գրելու։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անցեալ շաբաթ Դուբլինում տեղի ունեցաւ իրլանդացի նացիոնալիստների համաժողովը, որ կազմակերպել էր իրլանդական պատգամաւորների միութիւնը հողային նոր օրինագիծը քննելու համար։ Համաժողովը, որին ներկայ էր երկու հազար մարդուց աւելի մի բազմութիւն և որին մասնակցում էին համայնքների ժողովի իրլանդացի բոլոր պատգամաւորները, տևեց երկու օր, ապրիլի 3-ին և 4-ին։ Բանալով համաժողովը՝ նրա նախագահ Ջոն Ռէդմոնդ ասաց. «Ազգերի կեանքում, ինչպէս նաև առանձին անհատների կեանքում, լինում են դէպքեր, որոնց երբէք չէ կարելի վերադարձնել, եթէ մի անգամ ձեռքից բաց թողնվին նրանք։ Այդպիսի մի դէպքի հետ գործ ունեն այժմ իրլանդացիները։ Հողային հարցը լուծելու պայմանները այժմ աւելի նպաստաւոր են, քան երբ և իցէ եղել են։ Ինչ թերութիւններ էլ որ ունենայ հողային այժմեան օրինագիծը, այսուամենայնիւ դա մի վերին աստիճանի նշանաւոր օրինագիծ է, որովհետև նրա նպատակն է վերջնականապէս ոչնչացնել լէնդլորդութիւնը։ Կառավարութեան համար պարտաւորական է, նկատի առնելով պետութեան շահերը, ուղղել օրինագիծը այնպէս, որ նա հասնի իր նպատակին. դրա համար կառավարութիւնը բաւականաչափ մեծամասնութիւն ունի պարլամէնտի երկու ժողովներում ևս։ Եթէ համաժողովը մերժէ ընդունել հողային օրինագիծը, դա կը նշանակէ մի հարուածով ոչնչել նրան, բայց նոյն հետևանքին կը հասնի համաժողովը, եթէ չափազանց խիստ և բծախնդիր քննադատութեան ենթարկէ նրան։ Ապա համաժողովը, կարճատև վիճաբանութիւններից յետոյ, միաձայն ընդունեց Վիլիամ Օ'Բրայնի առաջարկած որոշման բանաձևը։ Այս որոշումով համաժողովը յայտնում է իր գոհութիւնը օրինագիծը պարլամէնտի քննութեանն առաջարկելու առիթով, բայց մի և նոյն ժամանակ մատնացոյց է լինում այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է էական փոփոխութիւններ մտցնել նրա մի քանի կէտերում։

—Բերլինի «Post» լրագրում տպագրված է մի հաղորդագրութիւն Դրէյֆուսի գործի առիթով, որ, ըստ երևոյթին, պաշտօնական բնաւորութիւն ունի։ Ֆրանսիական մի քանի լրագիրներ պնդում են, որ եթէ նշանակվի մի մասնաժողով՝ քննելու և հրատարակելու Դրէյֆուսի գործին վերաբերեալ դօսիէն, այդ հանգամանքը կարող է բարդութիւններ առաջ բերել Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնների մէջ։ «Շատ անգամ յայտնված է Գերմանիայի կողմից,—ասված է հաղորդագրութեան մէջ,—որ Դրէյֆուսի գործը և նրանից առաջանալիք հետևանքները ամենևին չեն հետաքրքրում նրան։ Ոչ ոք Գերմանիայում ոչ մի կապ չունի Դրէյֆուսի գործի հետ, ինչպէս այդ գիտեն ամենքը, այս պատճառով էլ այն բոլոր դօկումէնտները, որոնք գտնվում են այդ գործի մէջ և պարունակում են իրանց մէջ մեղադրանքներ Գերմանիայի դէմ—կեղծ են։ Այս պատճառով էլ մենք ոչ մի հիմք չունենք երկիւղ կրելու մասնաժողովի քննութեան հետևանքից, եթէ նա տեղի ունենայ»։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 ապրիլի

ՏՎԷՐ։ Ապրիլի 11-ին Տվէրը բաղդաւորվեց Մեծ Իշխան Թագաժառանգի այցելութեամբ։ Դիմաւորվելով կայսրանում զինուորական և քաղաքացիական իշխանութիւնների կողմից՝ գլուխ ունենալով նահանգապետին, Նորին Կայսերական Բարձրութիւնը գնաց մայր տաճարը, ուր երկրպագեց մասունքներին։ Ապա Մեծ Իշխան Թագաժառանգը այցելեց պատմական թանգարանը և ճաշեց նահանգապետի մօտ պալատում։ Երեկոյեան ժամը մօտ 10-ին Նորին Բարձրութիւնը ուղևորվեց Տվէրից, ազդաբնակութիւնը ոգևորված դիմաւորումն ցոյց տուեց Մեծ Իշխան Թագաժառանգին։

ԶԷՐՆԻԳՈՎ։ Այսօր արտակարգ գնացքով բերվեց Շէյբբինայի մարմինը։ Կայարանում դիմաւորեցին հանգուցեալի ազգականները և բոլոր վարչութիւնների, հիմնարկութիւնների և դասակարգերի ներկայացուցիչները՝ նահանգի կառավարչի և արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչ Սերգէյեվի հետ։ Բազմաթիւ են պակները։ Արքունական բոլոր շինութիւններից և մասնաւոր տներից կախված էին սև դրօշակներ։ Ժողովուրդը և զինուորները հրացաններով ճանապարհի երկու կողմը կանգնած էին կարգով։ Ցուղարկաւորութիւնը հասաւ Տրոյցկի վանքը, թաղման տեղը, երեկոյեան վեց ժամին։

ՏԻԼԶԻՏ։ Իշխան Խիլկով ժամանեց երէկ և ընդունվեց Նախագահ Հէգէլի կողմից։

ԼՈՆԴՈՆ։ «New-York Post» լրագրում տպված է հեռագիր Վաշինգտոնից, որի համաձայն Կարնէգի հօլանդական կառավարութեան տրամադրութեան տակ դրեց 1,500,000 դօլլար՝ Հաագայում գրադարան չինելու և պահպանելու նպատակով մշտական միջնորդ դատարանի հարկաւորութիւնների համար։

13 ապրիլի

ՄՕՍԿՎԱ։ Այսօր, 12 ժամին, Նոցա Կայսերական Մեծութիւնները Մեծ Իշխանի և Մեծ Իշխանուհու և Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրովիչի Երեխաների հետ միասին երկաթուղով ժամանեցին Երուսաղէմ կայարանը, և ապա ձիերով սվիտայի հետ միասին, որոնց թուում պալատի և ներքին գործերի մինիստրների հետ, անցան դէպի Նոր Երուսաղէմ վանքը։ Ժողովուրդը հազարներով կանգնած էր վանքում։ Վանքի դռներում դիմաւորեց Վլադիմիր վարդապետը հոգևորականութեան հետ միասին, խաչով, խաչվառներով և զանգահարութեամբ։ Նոցա Մեծութիւնները մտան Յարութեան տաճարը, լսեցին զատկական մաղթանքը, հաղորդեցին տաճարի սրբութիւնները և նահատակ Տատեանայի մասունքները. տեսան և երկրպագեցին Տիրոջ Գերեզմանի մատուռին, տեսան տաճարը և խորանը և անցան Արքայական սենեակները, ուր մուտքի մօտ աղ ու հաց ընդունեցին քաղաքից և վոլոստների աւագներից։ Արքայական սենեակներում առաջարկվեց թէյ, իսկ յետոյ այցելեցին թանգարանը և գրադարանը։ Վարդապետը օրհնեց Օգոստափառ Ուխտաւորներին սուրբ պատկերներով և մատուցեց վանքի նկարագրութիւնը։ Զանգահարութեան և հաղարաւոր ժողովրդի «ուրայի» աղաղակների ուղեկցութեամբ Նոցա Մեծութիւնները ճանապարհ ընկան կայարանը 4 ժամին։

ՊԼԻՎՆԱ։ Առաւօտեան 9 ժամին սկսվեց մատուռ-յուշարձանի հանդիսաւոր հիմնադրութիւնը. ներկայ էին իշխանի ներկայացուցիչը, մինիստրները, ռուսաց դիպլոմատիական գործակալը, ազգային ժողովի նախագահը, մամուլի ներկայացուցիչները և բազմաթիւ ժողովուրդ։ Արքեպիսկոպոսական տեղապահը հոգևորականութեան հետ հոգեհանգիստ կատարեց սպանված հերոսների համար։ Բանկէտ տրվեց բոլոր հիւրերին։

ՊԼԻՎՆԱ։ Հիմնադրութիւնից յետոյ զինուորական մինիստրը ճառ արտասանեց զինուորներին դիմելով. յիշեցրեց Պլէվնայի առման նշանակութիւնը, յիշատակեց սպանվածներին։ Բանկէտում գեներալ Նիկոլաեվ, իշխանի անունից, յայտնեց նրա և բուլգարական ժողովրդի շնորհակալութիւնը և առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը։ Բախմետէվ պատասխանեց, յիշեցնելով, որ երկրին հարկաւոր է խաղաղ բարօրութիւն, առաջարկեց իշխանի, իշխանորդու և ժողովրդի կենացը։ Կենացները ոգևորութեամբ ընդունվեցին։

ՊԱՐԻԶ։ «Matin» լրագրի կիսապաշտօնական յօդուածը մատնացոյց է անում, որ անհիմն է այն տարածված լուրը, որ իբր թէ հանրապետութեան նախագահի և մինիստր-նախագահի միջև տարաձայնութիւն է ծագել՝ Ալժիրի գեներալ-նահանգապետի հրաժարման և միաբանութիւններին վերաբերեալ օրէնքն անցկացնելու առիթով։

Կ. ՊՕԼԻՍ։ Իլդիզ-Քիօսկում շարունակվում են բանակցութիւններ դիմադրութեան զանազան տարրերի հետ։ Դիպլոմատիական շրջանները այնքան էլ գոհ չեն այդ հարցում Բ. Դրան բռնած դիրքից։ Վախենում են, որ ալբանական դիմադրութիւնը կը տարածվի և ուրիշ վիլայէթներում։ Հանգստացումը երկարատև չի լինի, եթէ տեղի չունենայ զինուորական ներգործութիւն։ Բ. Դուռը կարծում է, որ նախ և առաջ հարկաւոր է փորձել խաղաղ միջոցներ ալբանցիներին հանգստացնելու համար։

Սուլթանի իրադէով արգելվում է տալ օտարահպատակ թղթակիցներին վկայականներ՝ երկրի ներսում ճանապարհորդելու համար։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կարնէգի նուիրեց մէկ և կէս միլիոն դօլլար խաղաղութեան տաճար կառուցանելու մշտական միջնորդ դատարանի համար Հաագայում։

ՆԻՑՑԱ։ Կայացաւ մեծ հանդէս ռուսաց նոր եկեղեցու հիմնադրութեան առիթով այն մատուռի կողքին, որ կառուցված է ի յիշատակ Ցէսարեվիչի, որ Նիցցայում ի Տէր հանգեաւ 1865 թուի ապրիլին։

ԱԴԷՆ։ Գնդապետ Կօբբին ազատելու համար եղած արշաւանքի ժամանակ գեներալ Մաննինգօ պատերազմ ունեցաւ մօլլայի ոյժերի հետ, որոնք կորցրին 2000 մարդ. Կօբբ ազատված է։ Անգլիացիների կորուստները յայտնի չեն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նորին Կայսերական Մեծութիւնը յայտարարում է. անկեղծ երախտագիտութիւն Նորին Կայսերական Բարձրութեան Մօսկվայի շրջանի զօրքերի հրամանատարին. Բարձրագոյն շնորհակալութիւն գեներալներ Մալախովին, Բիլդերլինգին և Սօբոլէվին. Արքայական բարեհաճութիւն հրամանատար անձանց և Արքայական շնորհակալութիւն կադէտներին, իւնկէրներին և զինուորներին։

14 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա ժամանեց Գատչինօ ապրիլի 12-ին։

Կ. ՊՕԼԻՍ։ Գերմանական դեսպանի ստիպողական պահանջի համեմատ, այստեղ գտնված բոլոր գերմանական դպրոցները և բարեգործական հիմնարկութիւնները ճանաչված են պաշտօնապէս։

ՄՕՍԿՎԱ։ Նոցա Մեծութիւնները, Մեծ Իշխանը և Մեծ Իշխանուհին ապրիլի 11-ին ներկայ էին «Морякъ Скиталецъ» օպերայի ներկայացմանը։ Ապրիլի 12-ին երեկոյեան բաղդ ունեցան Նոցա Մեծութիւններին ներկայանալու և մատուցանելու ս. պատկեր Մօսկվայում գտնվող Գէօրգիեվեան ասպետ պաշտօնաթող զինուորների ներկայացուցիչները, նոյնպէս և կրթական տաճարների և վանքերի խաչուառակիրների ներկայացուցիչները։ Կիրակի Նոցա Մեծութիւնները Մեծ Իշխանուհիներ Օլգա և Տատեանա Նիկոլաեվնաների հետ և Մեծ Իշխանուհին Մեծ Իշխան Պավէլ Ալէքսանդրովիչի Օգոստափառ Երեխաների հետ ներկայ էին պատարագին Սպասի եկեղեցում։

Կ. ՊՕԼԻՍ։ Սուլթանի կողմից երէկ ընդունված ֆրանսիական դեսպանը պաշտպանեց այն առաջադրութիւնները, որ նորերս արեցին Բ. Դրան ռուսաց և աւստրօ-ունգարական դեսպանները։—Բ. Դուռը տեղեկութիւն ստացաւ Սմէրդէչի մօտ, Կաստորեան շրջանում, տեղի ունեցած կռիւ մասին. մարտի 28-ին վիրաւորվեց Սարաֆով և թաղված է դեռ այդ շրջանում։ Հրաման է արձակված եռանդով հալածելու Սարաֆովին։

Կ. ՊՕԼԻՍ։ Միութեան մասին բանակցութիւնները առաջ են գնում։ Երևի մինիստրների խորհուրդը վաղը կը զբաղվի այդ հարցով։

ԲԵՐԼԻՆ։ Կ. Պոլսից «Frankfurter Zeitung» լրագրի ստացած տեղեկութեան համեմատ, ալբանական ծագում ունեցող մօտ 100 ծա-

ռաններ—դռնապաններ և պալատական լակէյներ—հեռացրված են սուլթանի մօտ ծառայելուց և փոխարինված են վատահելի անատոլիական թիւրքերով։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Հեռագիրը Սանտ-Եավոթից (Զիլի) հաղորդում է, որ այրվեց համարեա ամբողջ Պիզապու քաղաքը իր բոլոր բանկերով, հեռագրական գրասենեակներով և առևտրական տներով, որովհետև ջուրը պակասեց հրդեհի դէմ կռուելու համար։

ՆԷԱՊՕԼ։ Էդուարդ Թագաւորը Աբրուցցեան դքսի հետ միասին ներկայ էր երէկ երեկոյեան հանդիսաւոր ներկայացմանը Սան-Կարլո թատրոնում։

ՍՕՖԻԱ։ Լուր է պտտում, որ բոլգարական ահմանագծային հսկողութիւնը ուժեղացրված է։

ՊԼԷՎՆԱ։ «Թագաւոր-Ազատարարի կոմիտէ» կողմից Թագաւոր Կայսրին ուղարկված հեռագրի մէջ խորին շնորհակալութիւն է յայտնվում այն մեծ զոհաբերութիւնների համար, որ արեցին ռուսաց Թագաւորը և ժողովուրդը բոլգարների ազատութեան համար։—Մենսոնից ստացված տեղեկութիւնների համեմատ, իշխանը նոյնպէս շնորհակալական հեռագիրներ ուղարկեց Թագաւոր Կայսրին և բումինական Թագաւորին։ Քաղաքի բանկէտում գեներալ Նիկոլաեվ առաջարկեց բումինական Թագաւորի կենացը։ Բոլգարական պուբլիցիստների ընկերութեան նախագահը, պատգամաւոր Բոբչէվ, առաջարկեց ռուս պուբլիցիստների կենացը, որոնք մեծ ծառայութիւններ մատուցին ռուսաց հասարակութեանը և բոլգարական ժողովրդին՝ լուսաբանելով գործի իսկական դրութիւնը։

ԲԷԼԳՐԱԴ։ Այստեղի լրագիրների տարածած տեղեկութիւնը, թէ ռուսաց հիւպատոս Մալկով, որ ուղարկված էր Միտրովիցա, վիրաւորված է,—զրկված է որ և է հիմքից։

ԲՕԽՕՏԼԷ։ Մայոր Գուլդի զորաստիւնի և մուլլայի զորքերի միջև տեղի ունեցաւ կռիւ Դանսպի մօտ։ Անգլիացիները կորցրին 13 մարդ սպանված, դրանց թւում երկու օֆիցէրներ. բացի դրանից չորս օֆիցէր վիրաւորված են. թշնամիների կողմից սպանվեցին 200 մարդիկ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
ՋԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մարթու, վիներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ՌԱՖԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԱՏԼԻՒՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երիուշ. չարչ. ուրբաթ։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՈՍԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՅԱՆԵՐԸ

Ն. Ն. ՈՍՍՈՒՍՏՐԼԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մարթու հ. (էլեկտրաբուժ.)։
Ն. Ս. ԼԻՒԲԵՑԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ) ներքին և վիներական հ.
ԿԻՍ-ԲԱՐԵՎ ՇԷՐԲԱՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԻԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ե. Ֆ. ԱՕՎԱՆԻՍՅԱՆ—առանց. ծոցկոնա և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

## 25

շատ մաքուր պատրաստված հայ գործիչների բաց նամակներ. նպատակայարմար զատկական շնորհաւորութիւնների համար։ Իւրաքանչիւր օրինակը—5 կոպ.։ Մեծաքանակ գնողներին առանձին զիջումով։

Դիմել՝ Фототипія Бр. М. Т. Гнуни. Тифлисъ. 3—3

## ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որ ծանօթ է ռուսերէն, ֆրանսերէն, հայերէն լեզուների՝ խիստ վարժ եւրոպական գործարանների հետ նամակագրութեան, փափագում է ծառայել մի՛ որ և է գրասենեակում. Հասցէն Թիֆլիս, պօստի նամակարկղ, № 137.
3—3

ՇՈՒՏՈՎ ԲԱՂԱՔԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

## ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

ամենայն իրեր, մարմարեայ լուացարան, մեքենաներ, դեղձանիկներ և այլ իրեր։ Գրիբոյէդովսկայա փողոց, տուն Իզմիրեանի № 30, Միջին յարկ. նոյն տեղում տրվում է վարձով մի սենեակ, ծառայով և ճաշով. կարելի է վարձել և առանց ճաշի։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, ապրիլի 15-ին
Հայ սիրողների խումբը կը ներկայացնէ
Առաջին անգամ

## ՈՍԿԷ ԵՒԱ

Կոմեդ. 3 արար. հեղ. Շէնդանի և Կոպէլ Էլֆէլդի, թարգմ. Արաքսեանի։

Մասնակցում են. տ.տ. Մամուլեան, Ոսկանեան, օր. Ջալալեան, պ.պ. Ամբարձումեան, Ակոբջանեան, Տէր-Գրիգորեան, Շերինեան, Էդգարինս։

Սկիզբն է 8½ ժամին

3—3 Բէժիսոր Արաքսեան

Ցաղագս ապագոյ ի վարձու զերկրային բերս գիւղօրէից Մայր Աթոռոյ Յատենի Սինօդի ս. Էջմիածնի նշանակեալ է ԱՃՈՒՐԴ և ԿՐԿՆԱՃՈՒՐԴ ըստ այսմ. Օշականի՝ ի 12 մայիսի և կրկնաճուրդ ի 16 նոյն ամսոյ, Եղուարդայ ի 19 մայիսի և կրկնաճուրդ ի 23 նոյն ամսոյ և Մաստարայի ի 28 մայիսի և կրկնաճուրդ ի 4 Յունիսի տարւոյս։ Ցանկացողք ունելոյ զայդոսիկ գիւղօրայս ի վարձու կարեն ներկայ գտանել ի ժամու հանդերձ գրաւականաւք։
3—3

Լոյս տեսան և վաճառվում են
ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

1) ԾՈՑԻ ԵՐԳԱՐԱՆ, երկրորդ տպագրութիւն—40 կոպ.։
2) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (պատկերազարդ)—25 կոպ.
3) ՈՍԿԻ ՁԿՆԻԿ (պատկերազարդ)—10 կ.

Ցանկացողները դիմում են՝ Центральная Книжная торговля, Книжный магазинъ „Гуттенбергъ“, Кавказская Книжная торговля. Կամ հեղինակին՝ Тифлисъ, 5 участ., ограда Армянск. церкви во имя св. Георгія.
2—3

ՐԱՖՖԻԻ ԳՐՔԵՐԻՑ
ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ

Ի նկատի ունենալով, որ Ռուսաստանում սաստիկ պահանջ է զգացվում Բաֆֆիի գրքերի, այդ առիթով մենք դիմեցինք տիկին Բաֆֆիին. օրերս մեծ քանակութեամբ գրքեր ենք ստացել տ. Բաֆֆիից, ուստի խնդրում ենք Ռուսաստանի զանազան քաղաքներից՝ Բաֆֆիի գրքեր ցանկացողներին դիմել ուղղակի մեզ։

Մեզ մօտ վաճառվում են նաև Աբովեանի, Պատկանեանի, Մերենցի, Լէօի և Հարոնեանի հեղինակութիւնները։

Դիմել՝ БАКУ, Оганнесу Газанчіанцу.
3—5

## ՀԱՐԿԱՒՈՐ Է

Ստավրոպոլի հայոց եկեղեցու համար չարակամներին հմուտ և եւրոպական ձայնագրութեան ծանօթ ՏԻՐԱՁՈՒ։ Ամսական 10 ռուբլի ռոճիկ, բնակարան և մօտ 400 ռուբլի արդիւնք։ Առաւելութիւն կը տրվի թեմական դպրոցասարաներին և ամուրիներին։

Դիմել՝ Ստավրոպոլ (Կովկ.), Ктитору Степану Джангировичу Ениколопову. 2—4

## 50,000

ծառեր փշատերև անտառի, եղևնի և շոճի, վեց վերշոկ և աւելի, արվում են կտրելու Իշխանուհի Մարիա Իոսիֆովնա Զավախովայի կալուածքում։ Կալուածքը գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Գրակալի կայարանից տասն և հինգ վերստ հեռաւորութեան վրա։ Բացի սրանից կալուածքում կան և ուրիշ տեսակի ծառեր—չինար, կաղնի, բոխի, աճառի և կեչի։ Տեղեկութիւններ ստանալու համար խնդրում են դիմել Իշխանուհի Զավախովային—Сел. Ховле, Горійскаго уѣзда, Тифлисск. губ. և Карсъ, князю Джавахову. 19—20

ԱՑԱՄՆԱԲՈՑԺ
## ՕՐ. Ս. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Շարունակում է հիւանդների ընդունելութիւնը։
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
(Ա. Կ.) 58—105

## ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ի միջի այլ հրատարակութիւնների վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝

ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. Բժ., Ստամոքսի կատարրը (ստամոքսի մի քանի հիւանդութիւնները) 1 պատկերով, Պետերբ. 1903 թ. գ. 20 կ.
ԹԱՌԱՑԵԱՆ Ս. դոկտ.-փիլ., Շիլլէր, բանաստեղծ-իդէալիստ, պատկերազարդ։ ընտիր թղթի վրա տպված, 1903 թ., Պետ. անկապ՝ 1 ր. 50 կ., չքեղ կազմով՝ 2 ր. 50 կ.
ԹԻԹԻՆՃԵԱՆ Մ., Ծածուկ մեղք մարդկային սեռի, Կ. Պոլիս, գ. 50 կ.
ՀԱՑԿՈՒՆԻ ԱՐՄ., Գերեզմանք երիտասարդաց, գ. տիպ., Կ. Պոլիս, գ. 50 կ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ Կ., Ծոցի երգարան, բ. տիպ., բարեփոխած, 1903 թ. Թիֆլ. գ. 40 կ.
» Բանաստեղծութիւններ, 1903 թ. Թիֆլ. գ. 25 կ.
» Թարգմանութիւն Պուշկինից՝—Ոսկի ձկնիկ, 1903 թ. Թիֆլ. գ. 10 կ.
ՔԼԷՄԱՆ դոկտ., Ամուսնական առողջապահութիւն, Կ. Պոլիս, գ. 50 կ.

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (Ե. Ռ.) 1—5



## СЕМЕЙНЫЙ за 6 р. 50 к.
## за 6 р. 50 ПОДАРОКЪ

Вслѣдствіе кенкуренціи предлаг. почтен. публикѣ воспользоваться случаемъ пріобрѣсти для себя и своего семейства нижеозначен. 8 предметовъ, стоющихъ въ отдѣльной продажѣ 15 р. 50 к. только за 6 р. 50 к. 1) Часы черные воронен. стали зав. безъ ключа, прочный механизмъ и звучн. ходъ. 2) Цѣпь американскаго новаго золота. 3) Брелокъ—парижск. кинематографъ съ 2-мя движущимися фигурами съ пикантными видами. 4) Золотое кольцо 56 пробы. 5) Сумка замшевая двмск. въ металлическ. рамк. съ крючк. для придѣлки къ кушаку. 6) Брошь серебр. 84 пр. вызолоч. электрич. способомъ. 7) Кожаное портмонэ изъ одного кроя съ штемпелемъ заказчика для имени, отчества и фамиліи (по желанію можетъ быть замѣняемо вмѣсто портмонэ—поргъ папиросъ кожаный, съ штемпелемъ заказчика. 8) Мундштукъ—аппаратъ Д—ра Коха. Всѣ эти 8 предм. рекомендуемъ съ пересылкой только за 6 р. 50 к. Открытые дамск. на 1 руб. дороже; закрытые мужскіе 7 р. 50 к. Часы высылаются провѣренные до минуты съ ручательствомъ на 6 лѣтъ по полученіи заказа и безъ задатка.

Адресовать: **Парижскій Базаръ „БО МАРШЕ“ Варшава.**

P. S. Съ вышеозначен. приложеніями рекомендуемъ часы американск. золота глухіе ремонтуаръ по 8 р. и 10 р. Часы серебр. зав. ключ. Анкеръ по цѣнамъ 10 р. и 12 р. ремонтуарные серебр. часы т. е. зав. безъ ключа на 2 р. дороже. (1, 15) 4—4




ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ
## ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ
ԹՈՒՂԹԷ ՏՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս կապսիւլների մէջ պարունակված զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել ամորէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ, կապայ-բալզամի և կուբեբայի փոխարէն։ Նա ներգործում է աւելի արագ, չէ յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չէ պատճառում և ոչնչացնում է փսխումն ու կլտիկը։

Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրա սև տառերով դրոշմված կնիքը։

Գտնվում է Ռուսաստանի գլխաւոր դեղատներում։

(5, 10, 15, 20 և 25) 14—60

## Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
## „ՆԱԳԷԺԴԱ“

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ դոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՒԻՆ

| | |
|---|---|
| Հիմնական գրամագլուխը . . . . . | 1,650,000 ռուբլի |
| Պահեստի դրամագլուխը . . . . . | 2,664,808 » |

Ի. ԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ ամբ եւ թէ պահեստներում ու խանութներում։

Ցանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր չէարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Ապահովութիւն բեռների արտաքին պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրեով նրանց պահեստներում, որի համար չատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

Ի. ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ.)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւաշինարանը համահաւասարութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւնների համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։
դ) Ապահովագրութիւն թանկագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։
Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։
Բացի տեղափոխութեամբ զբաղվող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի աւելի 350 գործակալութիւններ։
Ս. Պետերբուրգի հնգաժամեայ ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտեյսկի պրոսպեկտի վրա, № 10-բարդ տանը։
Լիազօրներ—ծովային շոգենաւաշինարանի համար՝ Բաքում, գետային շոգենաւաշինարանի համար՝ Նիժնի-Նովգորոդում։
Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնվականների տանը։ Ցերեկն № 108
(Ե. Ռ. Կ.) 59—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 14 Апрѣля 1903 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.